

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի

2021 թվականի հաշվետվություն

1. Կարևորագույն արդյունքները

Առաջին անգամ Հայաստանում իրականացվել է 2020-2021 թվականներին Հայաստանում շրջանառվող նոր կորոնավիրուսի տարբերակների ամբողջական գենոմի սեքվենավորում և մոլեկուլագենետիկական մոնիթորինգ նանոպորային սեքվենավորման կիրառմամբ: Հետազոտության տվյալներով՝ 2021թվականի մարտին Հայաստան է ներթափանցել SARS CoV-2-ի ալֆա տարբերակը, որը հունիս ամսից փոխարինվել է ավելի վտանգավոր՝ դելտա տարբերակով: Վերջինս այսօր հանդիսանում է դոմինանտ շրջատիպը մեր երկրում: Սեքվենավորման հետազոտությունները հաստատել են դելտա շտամում առկա վտանգավոր մուտացիաները, որոնցով պայմանավորված է բարձր վարակելիությունը և պատվաստանյութերի արդյունավետության նվազումը: Այս հետազոտությունների ամենամյա իրականացումը թույլ է տվել որոշել Հայաստանում կորոնավիրուսի տարբերակների տեղակալման դինամիկան, ինչպես նաև գնահատել մուտացիաների ազդեցությունը ՊՇՌ թեստերի ճշտության վրա: Ստացված տվյալները կանոնավոր կերպով տրամադրվում են ՀՀ առողջապահության նախարարություն (ղեկ.՝ կ.գ.դ. Ա. Առաքելյան):

Քրոնիկ լիմֆոցիտար լեյկեմիայի (ՔԼԼ) ժամանակ բացահայտվել է սերտ կապ միջանկյալ մոնոցիտների քանակի և առաջնային ու երկրորդային բուժման նշանակման միջև: Արդյունքները վկայում են, որ միջանկյալ մոնոցիտների 5,4 տոկոսային շեմը հանդիսանում է կանխագուշակիչ չափանիշ ՔԼԼ հիվանդների բուժումը սկսելու ժամկետների համար (ղեկ.՝ կ.գ.թ. Գ. Մանուկյան):

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի և Գերմանիայի Խաղողի սելեկցիայի ինստիտուտի հետ համատեղ հետազոտության արդյունքում հայտնաբերվել են ՀՀ Վայոց Ձորի մարզի խաղողի տեղածին վտանգված սորտեր և վայրի խաղողի գենետիկական ռեսուրսներ, իրականացվել է 300 նմուշների մոլեկուլագենետիկական նույնականացում և փաստագրում: Խաղողի ծնողական ձևերի գենետիկական վերլուծությունը բացահայտել է ենթադրյալ տեղածին հնագույն սորտեր: Նույնականացված սորտերի ամփոփ բնութագրերը ներբեռնվել են ՀՀ-ի և Եվրոպայի Vitis տվյալների շտեմարան (www.vitis.am, www.vivc.de) (ղեկ.՝ կ.գ.թ. Ք. Մարգարյան):

2. Բազային ֆինանսավորմամբ ստացված արդյունքները

Բարձր էներգիայով տիեզերական ճառագայթման երկարատև ազդեցության ուսումնասիրությունը մկների սրտամկանի տրանսկրիպտոմի վրա բացահայտել է 12 գեների էքսպրեսիայի փոփոխություններ, որոնք ասոցացված են սրտային, թոքային, մեթաբոլիկ հիվանդությունների հետ: Ի տարբերություն գամմա ճառագայթման՝ այդ փոփոխությունները ոչ գծային են, և ամենամեծ ազդեցությունը նկատվում է գերցածր և ցածր դոզաների պայմաններում (ղեկ.՝ կ.գ.դ. Ա. Առաքելյան):

Արյան մեջ շրջանառվող էրզոստինների արտաբջջային ԴՆԹ-ի սեքվենավորման տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ միտոքոնդրիումային ԴՆԹ-ի պարունակությունը հանդիսանում է սթրեսի, բորբոքային գործընթացների, միկրոգրավիտացիայի և ճառագայթման ազդեցության կենսամարկեր տիեզերագնացների մոտ (ղեկ.՝ կ.գ.դ. Ա. Առաքելյան):

Մարդու քաղցկեղային և նորմալ բջիջներում մակաձված ԴՆԹ-ի միաշղթա և երկշղթա վնասվածքների մակարդակից կախված բջիջների կենսունակության համեմատական ուսումնասիրության արդյունքում ցույց է տրվել, որ մարդու արյան քաղցկեղային բջիջները պահպանում են կենսունակությունը ԴՆԹ-ի երկու անգամ ավելի բարձր մակարդակի վնասվածքների առկայության դեպքում, քան՝ առողջ բջիջները: Դա պայմանավորված է

քաղցկեղային բջիջներում ԴՆԹ-ի երկշղթա վնասվածքների վերականգնման ավելի արդյունավետ ընթացքով (ղեկ.՝ կ.գ.թ. Ն. Բաբայան):

Քրոնիկ լիմֆոցիտար լեյկեմիայի (ՔԼԼ) ժամանակ նեոպլաստիկ բջիջների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ շրջանառվող մոնոցիտների և T բջիջների ակտիվությունը կախված է ՔԼԼ բջիջների քանակից և կիրառված թերապիայի տեսակից (ղեկ.՝ կ.գ.թ. Գ. Մանուկյան):

Ընտանեկան միջերկրածովյան տենդով (ԸՄՏ) տառապող հիվանդների հյուսվածքային նեյտրոֆիլները հետ են միգրացվում դեպի ոսկրածուծ, այլ ոչ թե քայքայվում են հյուսվածքներում, ինչը կարող է բացատրել, թե ինչու նեյտրոֆիլների հսկայական հոսքերը չեն հարուցում հյուսվածքների իմուն-միջնորդավորված վնասում: Առաջին անգամ նկարագրվել է մուտացված պիրիմային ինֆլամատոմի բարձր զգայունությունն ցիտոսկելետոնային ձևափոխությունների նկատմամբ ախտածինների բացակայության պայմաններում (ղեկ.՝ կ.գ.թ. Գ. Մանուկյան):

Կոլիսիցինի և դրա անալոգ միացությունների ազդեցության *in silico* ուսումնասիրությունը տուբուլինի դիմերիզացիայի վրա ցույց է տվել, որ կոլիսիցինի կապման կայքում փոխազդող միացությունները հանգեցնում են տուբուլինի ենթամիավորների միջև կապման էներգիայի նվազման և դիմերի ապակայունացման (ղեկ.՝ կ.գ.դ. Կ. Նազարյան):

Գենային ինժեներիայի և էլեկտրոֆիզիոլոգիական մեթոդների կիրառմամբ նկարագրվել են զարգացման և էպիլեպտիկ էնցեֆալոպաթիաների հետ ասոցացվող *KCNB1* գենի 23 կլինիկական նշանակություն ունեցող մուտացիաների տարաբնույթ ֆենոտիպեր, ներառյալ՝ անցուղու դարպասման և իոնային ընտրողականության խանգարումներ, սպիտակուցների թրաֆիքինգի դեֆիցիտներ, անցուղու ամբողջական ֆունկցիայի կորուստ, վայրի տեսակի սպիտակուցի վրա գերակշռող բացասական ազդեցություն, ֆունկցիայի ուժեղացում (*gain of function*) (ղեկ.՝ կ.գ.թ. Վ. Վարդանյան):

Վայոց Ձորի Հոստուն նեոլիթյան հուշարձանում իրականացված պեղումների ընթացքում հայտնաբերվել են բազմաթիվ բրածո ոսկորներ, խեցեղեն և քարե գործիքներ: Ոսկրանյութի տեսակային կազմի, մանրադիտակային մակերևութային փոփոխությունների, ինչպես նաև խեցեղենի և քարե գործիքների առատության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Հոստուն հնավայրը հանդիսացել է հնագույն մարդկանց կացարան (ղեկ.՝ կ.գ.դ. Լ. Եպիսկոպոսյան):

Ամբողջական գենոմների սեքվենավորման կիրառմամբ բնութագրվել են շիզեֆրաների առավել խնդրահարույց կլինիկական շտամերի հակամանրեային դեղամիջոցների նկատմամբ կայունության մեխանիզմները և վարակելիության ներուժը: Որոշվել է այդ շտամերի պատկանելությունը շիզեֆրանի հայտնի սեքվենս-տիպերին, ինչը կարևոր է համաճարակային բարձր ռիսկ ներկայացնող կլոնների հայտնաբերման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ա. Սեդրակյան):

Ոչ տիֆային սալմոնելաների կլինիկական իզոլյատները բնութագրվում են արտազատման համակարգերի բարձր ակտիվությամբ, ինչը վկայում է դեղամիջոցների նկատմամբ բազմակայունության (ԴԲԿ) ֆենոտիպի ձևավորման ռիսկի մասին: Կլինիկական իզոլյատների ամբողջական գենոմի վերլուծությամբ բացահայտվել են 7 տիպի 1-ին դասի ինտեգրոններ, և հաստատվել է դրանց դերը ԴԲԿ ֆենոտիպի ձևավորման մեջ (ղեկ.՝ կ.գ.թ. Ա. Սեդրակյան):

Ուսումնասիրվել են հակաբակտերիալ պեպտիդների տվյալների շտեմարանում առկա հակավիրուսային ակտիվություն ունեցող պեպտիդների ֆիզիկաքիմիական և կառուցվածքային հատկանիշները: Ստացված արդյունքները հիմք են հանդիսանում

հակավիրուսային ակտիվություն ունեցող նոր պեպտիդների նախագծման համար (ղեկ.՝ կ.գ.թ. Ն. Չաքարյան):

Առաջին անգամ նկարագրվել է բնական պայմաններում խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի (ԽԱԺՎ) գոյատևումը և վերարտադրությունը ֆիլոգենետիկորեն տարբեր չորս օրգանիզմներում (*Paramecium caudatum*, *Dendrobaena alpine*, *Aedes aegypti* և *Xeropicta derbentina*): Արդյունքները ցույց են տալիս անողնաշարավորների ուսումնասիրության կարևորությունը գոտնոզ փոխանցման ներուժ ունեցող բնական պոպուլյացիաներում ԽԱԺՎ-ի գոյատևման, տարածման և փոխանցման գործում (ղեկ.՝ կ.գ.դ. Չ. Կարայան):

Ծերացման դեմ պայքարի նպատակով բնական ծագման նոր նյութերի որոնման և ուսումնասիրման ծրագրի շրջանակներում բացահայտվել են խաղողի խխունջից անջատված սպիտակուցային գեղձի մզվածքի յուրահատուկ հատկություններ, որոնք թույլ կտան այն կիրառել որպես ծերացման դեմ բնական և արդյունավետ միջոց (ղեկ.՝ կ.գ.թ. Գ. Ցականովա):

3. Թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված արդյունքները

Բացահայտվել են գենոմի մակարդակով էքսպրեսիայի զգալի տարբերություններ՝ կախված *BRCA1* և *BRCA2* գեների սոմատիկ կամ ժառանգական մուտացիաներից: Նշված գեների սոմատիկ և ժառանգական մուտացիաները բնութագրվում են տարբեր կենսաբանական ֆունկցիաների ապակարգավորմամբ, ֆենոտիպային տարբերություններով և PARP-ինհիբիտոր գեների էքսպրեսիայի փոփոխականությամբ (ղեկ.՝ կ.գ.դ. Ա. Առաքելյան):

Ստեղծվել է օրգանական քիմիական ռեակցիաների ելքի կանխատեսման խորը նեյրոնային ցանց լեզվի թարգմանության համար կիրառվող մեքենայական ուսուցման մոդելի հիման վրա, որը ցուցաբերել է 91% ճշտություն: Հավաքվել է օրգանական ռեակցիաների տվյալների շտեմարան (900,000 ռեակցիա): Ստացված մոդելի հիման վրա գեներացվել է մետաբոլիկ ռեակցիաների կանխատեսման մոդել, որում կիրառվել է գիտելիքի փոխանցման մոտեցումը: Հավաքվել է 11,670 ռեակցիաներից բաղկացած մետաբոլիկ ռեակցիաների տվյալների շտեմարան (ղեկ.՝ կ.գ.թ. Ն. Բաբայան):

Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի վրա բջջային մետաբոլիզմի տարբեր ինհիբիտորների հակավիրուսային ազդեցության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պիրիմիդինների կենսասինթեզի DHODH ֆերմենտի ինհիբիտոր բրեքվինարը նվազեցնում է վիրուսի քանակը մոտ 10,000 անգամ: Հիմք ընդունելով ստացված արդյունքները՝ ստեղծվել է DHODH-ի համակարգչային սքրինինգի մոդել, իրականացվել է շուրջ 500 հազար միացության վիրտուալ սքրինինգ և ընտրվել են ԴՆԹ և ՌՆԹ վիրուսների վրա հակավիրուսային ազդեցություն ունեցող լավագույն 28 միացությունները (ղեկ.՝ կ.գ.թ. Ն. Չաքարյան):

Ստեղծվել է քիմիական միացությունների գրադարանների լայնածավալ սքրինինգի կալորիմետրիկ մեթոդ, որի միջոցով թեստավորվել է 90 ֆլավոնոիդից կազմված գրադարան: Հայտնաբերվել է խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի դեմ հակավիրուսային ակտիվություն ունեցող նոր ֆլավոնոիդ՝ կենպֆերոլը (ղեկ.՝ կ.գ.թ. Ն. Չաքարյան):

Հասարակ հերպես վիրուս (HSV) 1 պարունակող իմունային համալիրները (ԻՀ) հայտնաբերվել և անջատվել են առանց HSV ախտանշանների ռեմատոիդ արթրիտով (ՌԱ) տառապող հիվանդներից: HSV-1 պարունակող խոշոր ԻՀ-ները ցուցաբերում են ճնշող ազդեցություն նեյտրոֆիլների ֆագոցիտային ակտիվության վրա, ինչը կարող է

դիտարկվել որպես իմունային բջիջների հարձակումներից խուսափելու արդյունավետ միջոց: Մինչդեռ HSV պարունակող փոքր ԻՀ-ները ցուցաբերում են TLR2-կախյալ հարօքսիդատիվ ազդեցություն: Կարելի է եզրակացնել, որ անախտանիշ ընթացող HSV-1 վարակը կարող է նպաստել ՌԱ քրոնիկ բորբոքմանը (դեկ. կ.գ.թ. Գ. Մանուկյան):

Կատարվել են հետազոտություններ B30.2 դոմենի երրորդային կառուցվածքի մոլեկուլային մոդելավորման վերաբերյալ և դրա փոխազդեցության դինամիկայի ուսումնասիրություններում կասպազ-1 և պրո-ԻԼ-1 β սպիտակուցների հետ՝ այդ փոխազդեցության դերը աուտոբորբոքային գործընթացներում և ընտանեկան միջերկրածովյան տենդի պաթոգենեզում հստակեցնելու համար: Հայտնաբերվել են քիմիական միացություններ, որոնք ունեն մոդուլացնող ազդեցություն նշված համալիրների ձևավորման վրա (դեկ. կ.գ.թ. Գ. Առաքելով):

4. Կիրառական աշխատանքների արդյունքները

Կատարվել են «ԱՐԱՄԱՔՍ» և «Արմենիկում» պատրաստուկների ուսումնասիրություններ *in vitro* բջիջների կուլտուրայում և *in vivo* սիրիական համստերների մոդելի վրա: Պարզվել է, որ «ԱՐԱՄԱՔՍ» դեղամիջոցն ունի թերապևտիկ ազդեցություն SARS Cov-2 կորոնավիրուսի (դեղտա շտամ) նկատմամբ՝ նշանակալի նվազեցնելով սիրիական համստերների վիրուսային վարակի ախտաբանությունը: Ըստ ստացված արդյունքների՝ թեև վիրուսային տիտրերի նվազում չի դիտվում, սակայն ակնհայտ է դեղամիջոցի զգալի թերապևտիկ ազդեցությունը, որը սիրիական համստերների մոտ դրսևորվում է կորոնավիրուսային վարակին բնորոշ բարձր ջերմության և քաշի կորստի բացակայությամբ: Նաև ուսումնասիրված դեղամիջոցով թերապիայի ընթացքում նկատվում է համստերների թոքերի ինտերստիցիալ բորբոքման նվազման արագ դինամիկա (որոշվում է թոքերի համակարգչային տոմոգրաֆիայի և հյուսվածքաբանական անալիզի միջոցով): Պատրաստուկը գրեթե ամբողջությամբ վերացնում է վիրուսի ախտաբանական ազդեցությունը համստերների թոքերի վրա՝ մինչև հիվանդության 7-րդ օրը ներառյալ, մինչդեռ SARS-CoV-2-ով (դեղտա շտամ) վարակված սիրիական համստերների խմբում թոքերի վնասման ախտանշանները պահպանվում են 2-4 շաբաթ: «Արմենիկում» դեղամիջոցը ցուցաբերել է ոչ միայն «ԱՐԱՄԱՔՍ»-ին համանման թերապևտիկ, այլև ուժեղ հակավիրուսային ազդեցություն: Ըստ այդմ՝ հայտնաբերվել է վիրուսային տիտրերի զգալի նվազում՝ ընդհուպ մինչև վիրուսի անհետացում համստերների օրգանիզմից՝ վարակվելուց 3-5 օր հետո (դեկ. կ.գ.թ. Զ. Կարայան):

Առաջին անգամ Հայաստանում հիմնադրվել է խաղողի տեղածին սորտերի բարձրադիր օրգանական այգի՝ 1,5 հա տարածքով, Վայոց Ձորի Արտաբույնք գյուղում՝ ծովի մակերևույթից 2050 մ. բարձրության վրա: Իրականացվել է տեղածին սորտերի ամպելոգրաֆիկ բնութագրում և մոլեկուլազենետիկական նույնականացում, *VvMybA1* և *VvMybA2* գեների ալելային բազմաձևության ուսումնասիրություն, ինչպես նաև հետազոտվող սորտերի ամբողջական գենոմների սեքվենավորում (դեկ. կ.գ.թ. Զ. Մարգարյան):

Անջատվել են Հայաստանում շրջանառվող աղիքային վարակների հարուցիչների կլինիկական շտամերի դեմ բարձր արդյունավետություն ցուցաբերող բակտերիոֆագեր, որոնք կարող են ծառայել որպես հակաբիոտիկակայուն հարուցիչների դեմ պայքարի այլընտրանքային միջոց (դեկ. կ.գ.թ. Ա. Սեդրակյան):

5. 2021 թ. հրատարակումների ցանկը

Մենագրություններ, ժողովածուներ, գրքեր

1. Wood M., Mothersill C., Tsakanova G., Cresswel T., Woloschak G. (Editors), Biomarkers of Radiation in the Environment (BRITE), "Springer Netherlands" Publisher, 2021, 346p.

Գրախոսվող ամսագրերում ու զիտաժողովների գրախոսվող ժողովածուներում տպագրված հոդվածներ

1. Անտոնոսյան Մ.Ա., Ստենտոն Դ., Ամանոն Ն., Եպիսկոպոսյան Լ.Մ., Քարին Տակ քարանձավի ոսկրանյութում մոլեկուլային պահպանվածության գնահատում, «ՀՀ ԳԱԱ Ձեկույցներ», Հ.121, N1, 2021, էջ 66-73:
2. Бабаян Н.С., Гурьев Д.В., Воробьева Н.Ю., Григорян Б.А., Тадевосян Г.Л., Апресян Л.С., Чигасова А.К., Яшкина Е.И., Роднева С.М., Цишнатти А.А., Федотов Ю.А., Саркисян Н.К., Манукян А.Т., Арутюнян Р.М., Осипов А.Н., Колониеобразующая способность и остаточные фокусы белков репарации ДНК в фибробластах лёгких человека, облучённых субпикосекундными пучками ускоренных электронов, "Бюллетень экспериментальной биологии и медицины", Т.172, N7, 2021, с. 30-33.
3. Нерсесова Л.С., Петросян М.С., Гаспарян С.С., Газарянц М.Г., Акопян Ж.И., Адаптационная пластичность креатинкиназы мозга и печени крыс при воздействии общего рентгеновского излучения, "Радиационная биология. Радиоэкология", т.61, N6, 2021, с.615-624.
4. Петросян М.С., Нерсесова Л.С., Действие креатина в качестве пищевой добавки на геномную нестабильность моноклеарных клеток периферической крови и гепатоцитов крыс, подвергнутых рентгеновскому излучению, "Материалы 21-ой международной научной конференции «Сахаровские чтения 2021 года: Экологические проблемы XXI века»", 20-21 мая 2021 г., Минск, Беларусь, с.310-313.
5. Al-Sanea M., Chilingaryan G., Abelyan N., Arakelov G., Sahakyan H., Arakelov V., Nazaryan K., Hussein S., Alazmi G., Alsharari H., Al-Faraj W., Alruwaili F., Albilasi N., Alsharari T., Alsaleh A., Alazmi T., Almalki A., Alotaibi N., Abdelgawad M., Identification of non-classical hCA XII inhibitors using combination of computational approaches for drug design and discovery, "Scientific Reports", v.11, N1:15516, 2021.
6. Al-Sanea M., Chilingaryan G., Abelyan N., Sargsyan A., Hovhannisyan S., Gasparyan H., Gevorgyan S., Albogami S., Ghoneim M., Farag A., Mohamed A., El-Damasy A., Identification of Novel Potential VEGFR-2 Inhibitors Using a Combination of Computational Methods for Drug Discovery, "Life (Basel)", v.11, N10:1070, 2021.
7. Arabyan E., Hakobyan A., Hakobyan T., Grigoryan R., Izmailyan R., Avetisyan A., Karalyan Z., Jackman J., Ferreira F., Elrod C., Zakaryan H., Flavonoid Library Screening Reveals Kaempferol as a Potential Antiviral Agent Against African Swine Fever Virus, "Frontiers in Microbiology", 12:736780, 2021.
8. Arakelyan A., Melkonyan A., Hakobyan S., Boyarskih U., Simonyan A., Nersisyan L., Nikoghosyan M., Filipenko M., Binder H., Transcriptome Patterns of *BRCA1*- and *BRCA2*-Mutated Breast and Ovarian Cancers, "International Journal of Molecular Sciences", v.22, N3:1266, 2021.
9. Arzumanyan H., Hakobyan S., Avagyan H., Izmailyan R., Nersisyan N., Karalyan Z., Possibility of long-term survival of African swine fever virus in natural conditions, "Veterinary World", v.14, N4, 2021, pp. 854-859.

10. Avetyan D., Chavushyan A., Ghazaryan H., Melkonyan A., Stepanyan A., Zakharyan R., Hayrapetyan V., Atshemyan S., Khachatryan G., Sirunyan T., Davitavyan S., Martirosyan G., Melik-Andreasyan G., Sargsyan S., Ghazazyan A., Aleksanyan N., Yin X., Arakelyan A., SARS-CoV-2 detection by extraction-free qRT-PCR for massive and rapid COVID-19 diagnosis during a pandemic in Armenia, “Journal of Virological Methods”, N295:114199, 2021.
11. Bissierier M., Shanmughapriya S., Rai A., Gonzalez C., Brojakowska A., Garikipati V., Madesh M., Mills P., Walsh K., Arakelyan A., Kishore R., Hadri L., Goukassian D., Cell-Free Mitochondrial DNA as a Potential Biomarker for Astronauts' Health, “Journal of the American Heart Association”, v.10, N21:e022055, 2021.
12. Chilingaryan G., Abelyan N., Sargsyan A., Nazaryan K., Serobian A., Zakaryan H., Combination of consensus and ensemble docking strategies for the discovery of human dihydroorotate dehydrogenase inhibitors, “Scientific Reports”, v.11, N1:11417, 2021.
13. Garikipati V., Arakelyan A., Blakely E., Chang P., Truongcao M., Cimini M., Malareddy V., Bajpai A., Addya S., Bissierier M., Brojakowska A., Eskandari A., Khlgatian M., Hadri L., Fish K., Kishore R., Goukassian D., Long-Term Effects of Very Low Dose Particle Radiation on Gene Expression in the Heart: Degenerative Disease Risks, “Cells”, v.10, N2:387, 2021.
14. Hakobyan S., Loeffler-Wirth H., Arakelyan A., Binder H., Kunz M., A Transcriptome-Wide Isoform Landscape of Melanocytic Nevi and Primary Melanomas Identifies Gene Isoforms Associated with Malignancy, “International Journal of Molecular Sciences”, v.22, N13:7165, 2021.
15. Maisano Delsler P., Jones E., Hovhannisyan A., Cassidy L., Pinhasi R., Manica A., A curated dataset of modern and ancient high-coverage shotgun human genomes, “Scientific Data”, v.8, N1:202, 2021.
16. Manukyan G., Mikulkova Z., Turcsanyi P., Savara J., Trajerová M., Kubova Z., Papajik T., Kriegova E., Towards a Better Characterisation of Leukemic Cells in Chronic Lymphocytic Leukaemia: Cell-Size Heterogeneity Reflects Their Activation Status and Migratory Abilities, “Cancers (Basel)”, v.13, N19:4922, 2021.
17. Margaryan K., Melyan G., Röckel F., Töpfer R., Maul E., Genetic Diversity of Armenian Grapevine (*Vitis vinifera* L.) Germplasm: Molecular Characterization and Parentage Analysis, “Biology”, v.10, N12:1279, 2021.
18. Martirosyan A., Poghosyan D., Ghonyan S., Mkrtchyan N., Amaryan G., Manukyan G., Transmigration of Neutrophils From Patients With Familial Mediterranean Fever Causes Increased Cell Activation, “Frontiers in Immunology”, v.12:672728, 2021.
19. Melyan G., Barsegyan A., Sahakyan N., Dangyan K., Martirosyan Yu., Development of *in vitro* culture establishment conditions and micropropagation of grapevine rootstock cultivar 'Ruggeri-140', “BIO Web of Conferences”, v.39:03002, 2021, “International Scientific and Practical Conference Modern Trends in Science, Innovative Technologies in Vineyards and Wine Making (MTSITVW2021)”.
20. Mikulkova Z., Manukyan G., Turcsanyi P., Urbanova R., Savara J., Ochodkova E., Kudelka M., Brychtova Y., Molinsky J., Simkovic M., Starostka D., Novak J., Janca O., Dihel M., Ryznerova P., Mohammad L., Papajik T., Kriegova E., Deciphering the complex circulating immune cell microenvironment in chronic lymphocytic leukaemia using patient similarity networks, “Scientific Reports”, v.11, N1:322, 2021.
21. Nersisyan L., Simonyan A., Binder H., Arakelyan A., Telomere Maintenance Pathway Activity Analysis Enables Tissue- and Gene-Level Inferences, “Frontiers in Genetics”, N12:662464, 2021.

22. Petrosyan M., Arakelova E., Nersesova L., Ayvazyan V., Tsakanova G., In memory of Margarita Malakyan, a bright person and inquisitive scientist, "International Journal of Radiation Biology", 1-6, 2021.
23. Sahakyan H., Margaryan A., Saag L., Karmin M., Flores R., Haber M., Kushniarevich A., Khachatryan Z., Bahmanimehr A., Parik J., Karafet T., Yunusbayev B., Reisberg T., Solnik A., Metspalu E., Hovhannisyan A., Khusnutdinova E., Behar D., Metspalu M., Yepiskoposyan L., Rootsi S., VILLEMS R., Origin and diffusion of human Y chromosome haplogroup J1-M267, "Scientific Reports", v.11, N1:6659, 2021.
24. Sahakyan H., Nazaryan K., Mushegian A., Sorokina I., Energy-dependent protein folding: modeling how a protein folding machine may work, "F1000Research", 10:3, 2021.
25. Sahakyan H., Improving virtual screening results with MM/GBSA and MM/PBSA rescoring, "Journal of Computer-Aided Molecular Design", v.35, N6, 2021, pp.731-736.
26. Sanchez-Cano C., Alvarez-Puebla R., Abendroth J., Beck T., Blick R., Cao Y., Caruso F., Chakraborty I., Chapman H., Chen C., Cohen B., Conceição A., Cormode D., Cui D., Dawson K., Falkenberg G., Fan C., Feliu N., Gao M., Gargioni E., Glüer C., Grüner F., Hassan M., Hu Y., Huang Y., Huber S., Huse N., Kang Y., Khademhosseini A., Keller T., Körnig C., Kotov N., Koziej D., Liang X., Liu B., Liu S., Liu Y., Liu Z., Liz-Marzán L., Ma X., Machicote A., Maison W., Mancuso A., Megahed S., Nickel B., Otto F., Palencia C., Pascarelli S., Pearson A., Peñate-Medina O., Qi B., Rädler J., Richardson J., Rosenhahn A., Rothkamm K., Rübhausen M., Sanyal M., Schaak R., Schlemmer H., Schmidt M., Schmutzler O., Schotten T., Schulz F., Sood A., Spiers K., Staufer T., Stemer D., Stierle A., Sun X., Tsakanova G., Weiss P., Weller H., Westermeier F., Xu M., Yan H., Zeng Y., Zhao Y., Zhao Y., Zhu D., Zhu Y., Parak W., X-ray-Based Techniques to Study the Nano-Bio Interface, "ACS Nano", v.15, N3, 2021, pp.3754-3807.
27. Sargsyan R., Gasparyan A., Tadevosyan G., Panosyan H., Antimicrobial and antioxidant potentials of non-cytotoxic extracts of corticolous lichens sampled in Armenia, "AMB Express", v.11, N1:110, 2021.
28. Sirakanyan S., Arabyan E., Hakobyan A., Hakobyan T., Chilingaryan G., Sahakyan H., Sargsyan A., Arakelov G., Nazaryan K., Izmailyan R., Abroyan L., Karalyan Z., Arakelova E., Hakobyan E., Hovakimyan A., Serobian A., Neves M., Ferreira J., Ferreira F., Zakaryan H., A new microtubule-stabilizing agent shows potent antiviral effects against African swine fever virus with no cytotoxicity, "Emerging Microbes and Infections", v.10, N1, 2021, pp.783-796.
29. Schmidt M., Arshad M., Bernhart S., Hakobyan S., Arakelyan A., Loeffler-Wirth H., Binder H., The Evolving Faces of the SARS-CoV-2 Genome, "Viruses", v.13, N9:1764, 2021.
30. Tsakanova G., Arakelova E., Ayvazyan V., Karalyan Z., Matevosyan L., Arakelyan A., Amirkhanyan Z., Davtyan H., Khachatryan V., Grigoryan B., The LD50 for Low-Energy Ultrashort-Pulsed Laser Driven Electron Beam Whole-Body Irradiation of Wistar Rats, "Radiation Research", v.196, N6, 2021, pp.658-667.
31. Tsakanova G., Arakelova E., Matevosyan L., Petrosyan M., Gasparyan S., Harutyunyan K., Babayan N., The role of women scientists in the development of ultrashort pulsed laser technology-based biomedical research in Armenia, "International Journal of Radiation Biology", 11:1-7, 2021.
32. Tsakanova G., Ayvazyan V., Arakelova E., Ayvazyan A., Tatikyan S., Djavadovna L., Babayan N., Grigoryan R., Sargsyan N., Arakelyan A., Helix pomatia albumen gland water soluble protein extract as powerful antiaging agent, "Experimental Gerontology", v.146:111244, 2021.
33. Tsakanova G., Babayan N., Karalova E., Hakobyan L., Abroyan L., Avetisyan A., Avagyan H., Hakobyan S., Poghosyan A., Baghdasaryan B., Arakelova E., Ayvazyan V., Matevosyan L.,

- Navasardyan A., Davtyan H., Apresyan L., Yeremyan A., Aroutiounian R., Osipov A., Grigoryan B., Karalyan Z., Low-Energy Laser-Driven Ultrashort Pulsed Electron Beam Irradiation-Induced Immune Response in Rats, "International Journal of Molecular Sciences", v.22, N21:11525, 2021.
34. Tsakanova G., Matevossian L., Arakelova E., Ayvazyan V., Ayvazyan A., Tatikyan S., Yeremyan A., Arakelyan A., Qualitative and quantitative assessment of oxidative stress in human living erythrocytes using two-photon microscopy imaging technique, "Biological Journal of Armenia", v.73, N1, 2021, pp.60-68.
35. Tsakanova G., Stepanyan A., Arakelova E., Ayvazyan V., Tonoyan V., Arakelyan A., Hildebrandt G., Schültke E., Radioenhancement potential of Schiff base derived copper (II) complexes against lung carcinoma in vitro, "PLoS One", v.16, N6:e0253553, 2021.
36. Tsakanova G., Stepanyan A., Steffensen R., Soghoyan A., Jensenius J., Arakelyan A., Pattern Recognition Molecules of Lectin Complement Pathway in Ischemic Stroke, "Pharmacogenomics and Personalized Medicine", v.14, 1347-1368.
37. Willscher E., Hopp L., Kreuz M., Schmidt M., Hakobyan S., Arakelyan A., Hentschel B., Jones D., Pfister S., Loeffler M., Loeffler-Wirth H., Binder H., High-Resolution Cartography of the Transcriptome and Methylome Landscapes of Diffuse Gliomas, "Cancers (Basel)", v.13, N13:3198, 2021.
38. Zakaryan H., Chilingaryan G., Arabyan E., Serobian A., Wang G., Natural antimicrobial peptides as a source of new antiviral agents, "Journal of General Virology", v.102, N9, 2021.
39. Zakharyan M., Prevalence of class 1 integrons in clinical isolates of non-typhoidal *Salmonella enteric* circulated in Armenia, "Proceeding of the Yerevan State University. Chemistry and Biology", v.55, N1, 2021, pp.58-66.
40. Zakharyan M., Arakelova K., Gevorgyan Z., Sedrakyan A., Efflux Pumps in Non-Typhoidal *Salmonella* Isolates Recovered from Patients in Armenia, "Reports of National Academy of Sciences of Armenia", v.121, N4, 2021, pp.288-293.

6. Տնօրենի, գիտական զծով փոխտնօրենի և գիտքարտուղարի գիտական աստիճանը, անունը, ազգանունը

Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
 Տնօրեն՝ կ.գ.դ. Ա.Առաքելյան
 Փոխտնօրեն՝ կ.գ.թ. Գ.Յականովա
 Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Զ.Խաչատրյան
 Էլեկտրոնային փոստ՝ imb@sci.am
 Կայքէջ՝ <http://www.molbiol.sci.am>

Մասնագիտական խորհուրդ 042՝ «Կենսաբիմիա»
 Նախագահ՝ կ.գ.դ. Ս.Զախիլյան, գիտքարտուղար՝ կ.գ.թ. Գ.Մկրտչյան

7. Հաշվետու տարում պաշտպանված դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների քանակը

Պաշտպանվել են 2 թեկնածուական ատենախոսություններ:

8. Տեղեկություններ հաշվետու տարում պատվավոր կոչումների և պարգևատրումների արժանացած գիտնականների մասին

- Արսեն Առաքելյանը, Հովակիմ Զաքարյանը, Գայանե Մանուկյանը՝ «Արդյունավետ գիտաշխատող 2021» մրցույթի հաղթող:
- Գրիգոր Առաքելովը, Գոհար Ցականովան՝ «Արդյունավետ երիտասարդ գիտաշխատող 2021» մրցույթի հաղթող:
- Մարիյա Նիկողոսյանը՝ SS ոլորտի լավագույն ուսանող:
- Սահակյան Հարություն, Պետրոսյան Մարիամ, Ներսիսյան Լիլիթ՝ երիտասարդ գիտնականներին հավելավճարի տրամադրում ԱԳ-ով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար:

9. Գիտության և կրթության ոլորտում համագործակցությունը ՀՀ բուհերի և այլ կազմակերպությունների հետ՝ նշելով համատեղողների թվաքանակն ըստ կազմակերպությունների, յուրաքանչյուր կազմակերպության հետ համատեղ հրապարակումները

- ՀՀ ԳԱԱ՝ 2 համատեղող
- ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն՝ 14 համատեղող
- ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ՝ 1 համատեղ դրամաշնորհ
- Հայ-Ռուսական համալսարան՝ 14 համատեղող, 6 համատեղ հոդված
- Երևանի պետական համալսարան, 2 համատեղող, 4 համատեղ հոդված
- Երևանի պետական բժշկական համալսարան՝ 4 համատեղող, 3 համատեղ հոդված
- Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղ՝ 1 համատեղող
- Հայաստանի ազգային ազրարային համալսարան, 1 համատեղող, 2 համատեղ հոդված
- «ԲԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ՝ 3 համատեղող, 10 համատեղ հոդված
- Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամ (FAST)՝ 2 համատեղող, 1 համատեղ հոդված
- «Դենովո Սայենսիս» տեխնոլոգիական ընկերություն՝ 1 համատեղող, 2 համատեղ հոդված
- «Դավիդյանց լաբորատորիաներ» («ԳԻՄԱՆԵ» ՍՊԸ), 2 համատեղող, 1 համատեղ հոդված
- ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն
- ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ

10. Տեղեկություն համատեղ միավորումների (ամբիոններ, լաբորատորիաներ և այլն) մասին

- Կենսաինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության բազային ամբիոն՝ Հայ-Ռուսական համալսարանի հետ համատեղ
- Մոլեկուլային և բջջային կենսաբանության ամբիոն՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ
- «ԲԵՆԴԼ» - ՄԿԻ փորձարարական կենսաբանության համատեղ լաբորատորիա

Տնօրեն՝ կ.գ.դ. Ա.Առաքելյան

Գիտքարտուղար՝ կ.գ.թ. Զ.Խաչատրյան

2021 թ. թեմատիկայի ամփոփ տվյալներ

